



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

ԹԻԻ 30369
Մարտ 3, 1988

Արժանաշնորհ
Տ. Գարեգին Բհնյ. Գասպարեան
Հովի Ա. Յակոբ Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ունեթչաթըր

Ստացած ենք Փետրուար 18, 1988 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 7ին գումարուած համայնքիդ Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այստ գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:՝

Հանցէք փութով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Եկեղեցոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Օհան Պաս
Մարք Տէրտէրեան
Էտուըրտ Էսայեան
Տոթթ. Լայնըլ Կոլսթըն
Թորոս Մանկասարեան
Տան Մուշեղեան